ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 24-24

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «30» 01 2019+ թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը, ի դեմս **ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի** (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտը, ի դեմս **տնօրենի պաշտոնակատար (ռեկտոր) Գևորգ Պողոսյանի**

(կազմակերպության անվանումը) *(անուն ազգանուն)*

(այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «**Հայ հասարակության փիլիսոփայական,սոցիալ-քաղաքական և իրավագիտական հիմնախնդիրներ (պատմություն և արդիականություն)**» ծրագրի

(ծրագրի անվանումը)

(այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով ՀՀ ԳԱԱ պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեով նախատեսված **62075,4 (Վաթսուներկու միլիոն յոթանասունհինգ հազար չորս հարյուր)**

(թվերով և բառերով)

ՀՀ դրամ գումար, ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ), իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնությունը, Ծրագրի առաջադրանքը, օրացուցային պլանը, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 ՀՀ ԳԱԱ իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 6-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Կոմիտե,

2.4.6 ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում ՀՀ ԳԱԱ ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

3 Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է **62075,4 (Վաթսուներկու միլիոն յոթանասունհինգ հազար չորս հարյուր)** ներառյալ՝ ԱԱՀ:

(թվերով և բառերով)

4 Մոնիթորինգ

4.1 ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ -ի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4.4 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և արվում են առաջարկություններ:

5 Վճարման կարգը և ժամկետները

5.1 ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 ՀՀ ԳԱԱ-ն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6 Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7 Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են

հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9 Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա	**ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ**
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24	ք.Երևան Արամի 44
Հ/հ 900011024115 ՖՆ Գարծառնական վարչություն.	Հ/հ 900018005497 թիվ 1 Գանձապետական բաժ.
ՀՎՀՀ 00005673	ՀՎՀՀ 02508174
Նախագահ՝ Ռաֆիկ Մարտիրոսյան	Տնօրենի պաշտոնակատար՝ Գևորգ Պողոսյան
_____ *(ստորագրություն)*	_____ *(ստորագրություն)*
Կ. Տ.	Կ. Տ.
Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ *(ստորագրություն)*	(Գևորգ Պողոսյան) *(անուն ազգանուն)*

Հավելված 1
«30» 01 2019 թ.
N 25-24 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը և ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի տնօրենի պաշտոնակատար (ռեկտոր) Գ.Պողոսյանը վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «30» 01 2019 թ. N 25-24 պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ **62075,4 (Վաթսուներկու միլիոն յոթանասունհինգ հազար չորս հարյուր)** ՀՀ դրամ գումարի չափով, ներառյալ՝ ԱԱՀ:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա	**ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ**
Նախագահ՝ ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ	Տնօրենի պաշտոնակատար՝ Գևորգ ՊՈՂՈՍՅԱՆ
(ստորագրություն)	*(ստորագրություն)*
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2

«30» 01 2019 թ.
N 15-24 պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ
Հայ հասարակության փիլիսոփայական, սոցիալ-քաղաքական և իրավագիտական հիմնախնդիրներ (պատմություն և արդիականություն) ծրագրի
(ծրագրի անվանումը)

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջե:
2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):

Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում հետազոտությունները տարվում են հետևյալ չորս հիմնական գիտական ուղղություններով՝ փիլիսոփայություն, սոցիոլոգիա, իրավունք և քաղաքագիտություն: Հասարակական կյանքում առաջացող երևույթների, սոցիալական, քաղաքական իրավական ֆենոմենների խորին և բազմակողմանի ուսումնասիրությունների արդիականությունը կապված է տարածաշրջանում և հատկապես մեր երկրում ընթացող նշանակալի սոցիալ-քաղաքական և իրավական փոփոխությունների հիմնային վերլուծության և հետագա զարգացման հեռանկարների տեսա-գործնական հիմնավորման հետ: Թեմայի նպատակն է՝ բազմակողմանիորեն ուսումնասիրել և գիտական վերլուծությամբ բացահայտել հայ հասարակության պատմական ու ժամանակակից զարգացման համար նշանակալի հիմնախնդիրների, սոցիալական, քաղաքական ու իրավական համակարգերի, ինչպես նաև գործընթացների իրականության հետ փոխհամեմատությամբ վերլուծված ներկա իրավիճակը և հնարավոր զարգացումները:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտը բազային ֆինանսավորմամբ ծրագրում նշված նպատակներին հասնելու համար ունի գիտության համապատասխան ուղղություններով անհրաժեշտ մասնագետներ, այդ թվում՝ երկու ակադեմիկոս, մեկ թղթակից անդամ, 12 գիտության դոկտորներ, 13 թեկնածուներ, ինչպես նաև բազմաթիվ ասպիրանտներ, հայցորդներ և դոկտորանտներ:

Ինստիտուտի գիտական անձնակազմն ունի բազմամյա ձեռքբերումներ ու լուրջ գիտական փորձ: Գիտաշխատողները յուրաքանչյուր տարի մասնակցում են տարբեր միջազգային գիտական համաժողովների և քննարկումների, ընդգրկված են միջազգային ծրագրերում, տպագրում են մի քանի տասնյակ գիտական հոդվածներ ու մենագրություններ մեզանում և արտեկրում: Հատկանշական է, որ Ինստիտուտը շարունակաբար իրականացնում է գիտական

(Ռուսաստանի Դաշնության, Բելարուսի, Ղազախստանի, Ղրղզստանի, Տաջիկստանի, Մոլդովայի) և՛ միջազգային այլ նշանակալի գիտա-հետազոտական կենտրոնների հետ (ԱՄՆ, Գերմանիա, Ռումինիա, Հունգարիա, Լիտվա):

Նախորդ տարիներին Ինստիտուտին հաջողվել է արտաբյուջետային և գրանտային միջոցներ ներգրավել մի շարք կիրառական սոցիոլոգիական և քաղաքագիտական ուսումնասիրություններ իրականացնելու համար:

4. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում հետազոտությունները տարվում են չորս գիտական ուղղություններով՝ փիլիսոփայություն, սոցիոլոգիա, իրավունք և քաղաքագիտություն:

Տեսական փիլիսոփայության բնագավառում 2019թ.-ին նախատեսվում է ուսումնասիրություններ շարունակել արդի տեսական փիլիսոփայության և մեթոդաբանության հայեցակարգերում կենտրոնական տեղ զբաղեցնող հումանիտար գիտությունների մեթոդաբանական և փիլիսոփայական հիմնախնդիրների ոլորտում: Ծրագրի շրջանակներում իրականացվելու են ուշագրավ գիտական հետազոտություններ ժամանակակից տեսական փիլիսոփայության հիմնարար գաղափարների բովանդակության մեկնաբանության ուղղությամբ : Շարունակվելու են ուսումնասիրություններ՝ նվիրված գիտության փիլիսոփայության հայեցակարգերին՝ որպես գիտության պատմության կարևոր դրվագների արտահայտում (ղեկ. ակադեմիկոս Հ.Գևորգյան):

Հումանիտար գիտակարգերի՝ այդ թվում լեզվափիլիսոփայության ենթատեքստում, լեզվի ընդհանուր տեսության ու տեքստակենտրոն սեմանտիկ հայեցակարգի տեսանկյունից շարունակվելու են լեզվի և գենոմի հարաբերակցության վերլուծությունները: Իրականացվելու են գիտական հետազոտություններ գիտության հիմնարար գաղափարների բովանդակության մեկնաբանության ուղղությամբ: Շարունակվելու են հետազոտություններ գիտության փիլիսոփայության, ինչպես նաև լեզվի փիլիսոփայության հայեցակարգերի, որպես գիտության պատմության կարևոր դրվագների, վերաբերյալ: Գործնական նշանակությունը ցուցադրելու նպատակով ներկայացվելու են ՀՀ-ի համար կենսական նշանակություն ունեցող ժամանակակից քաղաքական և հանրային գործընթացների վերլուծություններն, որոնք իրենց բազմակողմանիության շնորհիվ կարող են զգալիորեն հարստացնել մեր տեսական պատկերացումները:

Դարեր ի վեր նշանավոր հայ մտածողները ստեղծել են հարուստ փիլիսոփայական մշակույթ և ժառանգություն, որի զգալի մասը դեռևս ուսումնասիրված չեն և պահպանվել են ձեռագրերի տեսքով: Ինստիտուտի կողմից կատարված պատմափիլիսոփայական հետազոտություններ

վերլուծության ենթարկել և ուսումնասիրել հայ փիլիսոփայության այդ հարուստ ժառանգությունը: Հայ փիլիսոփայության պատմության բաժնի գիտաշխատողները 2019թ. շարունակելու են հայ փիլիսոփայական մտքի նշանավոր ներկայացուցիչների աշխատությունների վերլուծությունն ու նրանց գործերի հրապարակումը: Նոր մշակված մեթոդաբանական հայեցարգի հիման վրա շարունակվելու են վերլուծական գիտահետազոտական աշխատանքներ հայ միջնադարյան, XIX դարի արևմտահայ փիլիսոփայության /այդ թվում՝ քաղաքական փիլիսոփայության/ պատմության հիմնախնդիրների շուրջ: Նախատեսվում է ավարտին հասցնել մի շարք աշխատանքներ ազգային փիլիսոփաքաղաքական մտքի պատմության առանցքային խնդիրների՝ հայոց քաղաքակրթական ինքնության, ազգային սահմանադրական մշակույթի պատմա-իրավական և գաղափարախոսական հիմքերի, ազգային իրավունքի պաշտպանության եղանակների և այլի լուսաբանման ուղղությամբ: Հայ պատմական հոգևոր մշակույթի կենսական արժեհամակարգում միահյուսված են եղել իրավականը, քաղաքականը, կրոնականն ու բարոյականը: Այս երևույթի փիլիսոփայական հետազոտությունը հնարավորություն կտա լուսաբանելու ազգային գիտակցության ձևավորման բազմազան շերտերը:

2019թ.-ին բազային ծրագրի շրջանակներում, իրականացվելու են սոցիալական և քաղաքական հիմնարար ու բազմակողմանի վերլուծություններ մեր հանրապետությունում ընթացող սոցիալ-քաղաքական գործընթացների ու դրանց հետևանքների բացահայտման ուղղությամբ: Սոցիալական փիլիսոփայության նորաստեղծ բաժինը գիտական ուսումնասիրություններ է ծավալելու երկրում բնակչության շրջանում տեղ գտած և խորացած քաղաքական ու սոցիալական օտարվածության երևույթների, ինչպես նաև դրանց հաղթահարման ժամանակակից միջոցների բացահայտման: Սոցիալական փիլիսոփայության բաժնի հետազոտությունները ուղղված են լինելու նաև Հայաստանում պարլամենտական կառավարման համակարգի ներդրման և գործառնության առանձնահատկությունների ուսումնասիրմանն ու վերլուծությանը, նպատակ ունենալով բացահայտելու իշխանության լեգիտիմության ազդեցությունը տարբեր հասարակական երևույթների զարգացման և կատարելագործման հարցում:

Սոցիոլոգիայի բնագավառում շարունակվելու են հետազոտություններ արդի հայ հասարակությունում ծավալվող քաղաքական և քաղաքացիական նորառաձ շարժումների ձևավորման, ՝՝թավշյա հեղափոխության՝՝ համատեքստում քաղաքականորեն նշանակալի իրողությունների, համակարգերի, գործընթացների ու հիմնախնդիրների վերաբերյալ: Սոցիոլոգիայի բաժինը նախատեսում է Հայկական սոցիոլոգիական ասոցիացիայի հետ համատեղ հասարակական կարծիքի մի շարք սոցիոլոգիական հետազոտություններ իրականացնել՝ երկրում նոր քաղաքական իրավիճակի պայմաններում քաղաքացիական հասարակության արդյունավետ գործունեությանը նպաստող

երկրում բնակչության արտագաղթի ծավալների, դրանց ուղղվածության ու հնարավոր ներգաղթի ու հայրենադարձության գործընթացներին, ինչպես նաև հայրենադարձների մեր երկրում սոցիալական ադապտացիայի պայմաններին ու մարտահրավերներին:

Քաղաքագիտական ուսումնասիրությունների բնագավառում 2019թ.-ին աշխատանքներ են իրականացվելու երկրի քաղաքական արդիականացման ուղիների և ռազմավարության բացահայտման ուղղությամբ: Ուսումնասիրվելու են քաղաքական մշակույթի արդիականացման նախադրյալներն ու քաղաքական դիսկուրսի առանձնահատկությունները, ինչպես նաև վերլուծվելու են ազգային անվտանգության ռազմավարական հիմնախնդիրներն ու ԼՂՀ հակամարտության հիմնահարցերը: Նախատեսվում է իրականացնել բազմակողմանի հետազոտություններ՝ նվիրված նոր ձևավորվող աշխարհակարգի մարտահրավերների բացահայտմանը, ՀՀ ազգային ու պետական շահերի համատեքստում դրանց հաղթահարման հնարավոր ուղիների մշակման ուղղությամբ: Հաշվի առնելով տարածաշրջանի քաղաքական, կրոնական, ազգային, լեզվական, մշակութային և այլ բազմազանությունը՝ Հարավային Կովկասի երկրների արդիականացման կոնսոցիատիվ հեռանկարը թույլ է տալիս ժողովրդավարացման ճանապարհով հաղթահարել հնարավոր խոչընդոտները, լուծել անվտանգության խնդիրները՝ այդ գործընթացում կիրառելով «փափուկ», «կոշտ» և «խելացի» ուժի տեսական հայեցակարգային ներուժը:

Պետահրավական հետազոտությունների ոլորտում 2019թ. շարունակվելու են աշխատանքներ, նվիրված իրավահասկացության ժամանակակից մոտեցումների ու արդի իրավական համակարգերի գիտական վերլուծությանը, ինչպես նաև իրավագիտության պատմա-տեսական զարգացումների հետազոտությանը: Իրավունքի տեսության և պատմության շրջանակներում իրականացվելու են բազմակողմանի և համապարփակ ուսումնասիրություններ՝ նվիրված հայ իրավունքի աղբյուրների և իրավական մտքի հիմնական ներկայացուցիչների ժառանգությանը, միջնադարյան Հայաստանի իրավական մտքի ուսումնասիրությանն ու տեսական ընդհանրացումներին: 2019թ-ին շարունակվելու են աշխատանքներ՝ նվիրված անձի իրավական կարգավիճակի հիմնախնդիրների բազմակողմանի ուսումնասիրությանը, որոնք նպատակաուղղված են բացահայտելու անձի քաղաքացիության, իրավասուբյեկտության, իրավունքների, ազատությունների և պարտականությունների առանձնահատկությունները պետություն-անհատ փոխհարաբերություններում ժամանակակից ժողովրդավարական, իրավական պետության արդի սահմադրահիրավական զարգացումների պետական շինարարության համատեքստում:

«Հայ հասարակության փիլիսոփայական, սոցիալ-քաղաքական և իրավագիտական հիմնախնդիրներ (պատմություն և արդիականություն)» բազային ֆինանսավորմամբ ծրագրի իրականացման արդյունքները 2019թ.-ին նախատեսվում է ներկայացնել գիտական հոդվածների,

մասնակցություն միջազգային գիտական ծրագրերին ու միջոցառումներին և գիտամատչելի հրապարակումներ թերթերում, ամսագրերում և հեռուստատեսությամբ: Նախատեսվում է նաև գիտաուսումնական գործունեության իրականացում ասպիրանտների և դոկտորանտների պատրաստման ուղղությամբ և

Կազմակերպության
տնօրենի պաշտոնակատար՝

(ստորագրություն) (Գևորգ Պողոսյան_)
(անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝ (ստորագրություն) (Գևորգ Պողոսյան)
(անուն ազգանուն)

Հավելված 3
«30» 01 2019 թ.
N 15-24 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ *

«Հայ հասարակության փիլիսոփայական, սոցիալ-քաղաքական և իրավագիտական հիմնախնդիրները (պատմություն և արդիականություն)» ծրագրի
(ծրագրի անվանումը)

հ/հ	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները	կատարման ժամկետները	պահանջվող գումարը (հազար դրամ)
	Հայ հասարակության փիլիսոփայական, սոցիալ-քաղաքական և իրավագիտական հիմնախնդիրները (պատմություն և արդիականություն)	Հայաստանի Հանրապետությունում իրավական պետության, քաղաքացիական հասարակության, արդի սոցիալական և քաղաքական ինստիտուտների ձևավորման գործընթացների փիլիսոփայական, սոցիալ-քաղաքական և իրավագիտական հիմնախնդիրների հետազոտություն և վերլուծություն, հայ ժողովրդի հոգևոր ժառանգության և պատմա-մշակութային ավանդույթների պահպանման ու զարգացման ուսումնասիրություն:	-Տեսական վերլուծություններ: -Կիրառական ուսումնասիրություններ: -Գիտաուսումնական գործունեություն, երիտասարդ գիտական կադրերի պատրաստում: -Գիտաժողովների ու քննարկումների կազմակերպում: -Պետաիրավական փաստաթղթերի, օրենքների և օրինագծերի, պաշտոնական որոշումների ու նախագծերի գիտական փորձաքննություն ու խորհրդատվություն	Գիտական հոդվածների, ժողովածուների և մենագրությունների տպագրություն, հանրապետական ու միջազգային գիտաժողովների կազմակերպում, միջազգային գիտական ծրագրերին ու միջոցառումներին մասնակցություն, գիտաուսումնական գործունեության իրականացում, ասպիրանտների և դոկտորանտների պատրաստում, գիտամատչելի հրապարակումներ թերթերում, ամսագրերում և հեռուստատեսությամբ:	01.01.2019թ. – 31.12.2019թ.	62075,4
Ընդամենը						

Կազմակերպության
տնօրենի պաշտոնակատար՝ _____ (Գևորգ Պողոսյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (Գևորգ Պողոսյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Հավելված 4
«30» 01 2019թ.
N 15-24 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հայ հասարակության փիլիսոփայական,սոցիալ-քաղաքական և իրավագիտական հիմնախնդիրներ(պատմություն և արդիականություն) ծրագրի

(ծրագրի անվանումը)

հազար դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	47136,0	*9427,2*	*11784,0*	*11784,0*	*14140,8*
2	տնտեսական և այլ ծախսեր*	4591.4	*918,3*	*1147,8*	*1147,9*	*1377,4*
Ընդամենը (առանց ԱԱՀ)		*51727,4*	*10345.5*	*12931.8*	*12931.9*	*15518.2*
ԱԱՀ		*10348,0*	*2069.6*	*2587.0*	*2587.0*	*3104.4*
ԸՆԴԱՄԵՆԸ		**62075.4**	**12415.1**	**15518.8**	**15518.9**	**18622.6**

Կազմակերպության
Տնօրենի պաշտոնակատար _____ (Գ.Ա.Պողոսյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կազմակերպության
գլխավոր հաշվապահ՝ _____ (Կ.Տ.Դեղոյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կ.Տ.

Հավելված 4.1
«30» 01 2019թ.
N 4-24 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ †

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ (հազար դրամ)
1	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	1936.4
	էլեկտրաէներգիայի ծառայություն	*640.0*
	գազի ծառայություն	*756.4*
	ջրամատակարարման ծառայություն	*30.0*
	կապի ծառայություն	*450.0*
	աղբահանություն	*60.0*
2	Գույք	200.0
3	Սարքեր և սարքավորումներ	300.0
4	Նյութեր	400.0
5	Գործուղումներ	-
6	Գիտական միջոցառումների կազմակերպում	-
7	Արշավախմբեր	-
8	Հրատարակման ծախսեր	955.0
	Բաժանորդագրություն	400.0
	Այլ ծախսեր	400.0
Ընդամենը		**4591.4**

Կազմակերպության տնօրենի պաշտոնակատար՝ _____ (Գ.Ա.Պողոսյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կազմակերպության
գլխավոր հաշվապահ՝ _____ (Կ.Տ.Դեղոյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կ.Տ.

Հավելված 5
«30» 01 2019 թ.
N 4-24 պայմանագրի

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ծրագրի անվանումը՝ Հայ հասարակության փիլիսոփայական, սոցիալ-քաղաքական և իրավագիտական հիմնախնդիրները (պատմություն և արդիականություն) ծրագրի
(ծրագրի անվանումը)

հ/հ	ազգանուն	ծրագրի շրջանակներում նախատեսված պաշտոն	գիտական աստիճան	ամսական աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը *(հազար դրամ)*
1	*2*	*3*	*4*	*5*
1	Պողոսյան Գևորգ Արամի	տնօրենի պաշտոնակատար	ս.գ.դ.	220000
2	Ղազանչյան Լիլիթ Արմենի	փոխտնօրեն	ի.գ.թ.	110000
3	Գևորգյան Համլետ Ամբակումի	տնօրենի. խորհրդատու	փ.գ.դ.	105000
4	Ջիջյան Անահիտ Ռոբերտի	գիտ.քարտուղար	փ.գ.թ.	50000
5	Սաֆարյան Նարիա Նաիրիի	տն.օգն-քարտ.		80000
6	Աթաբեկովա Սեվիլ Միքայելի	անձ.կառավ.բաժնի պետ		100000
7	Դեղոյան Կարինե Տարզանի	հաշվապահ		110000
8	Կարապետյան Ալմաստ Կոմիտասի	հաշվետար		50000
9	Մեսրոպյան Արսեն Էդուարդի	տնտեսվար		100000
10	Գևորգյան Համլետ Ամբակումի	բաժնի վարիչ	փ.գ.դ.	55000
11	Զոլյան Սուրեն Տիգրանի	առ. գիտաշխ.	բ.գ.դ.	75000
12	Առաքելյան Հրանտ Բաբկենի	առ. գիտաշխ.	փ.գ.դ.	75000
13	Հակոբյան Իդա Դմիտրիի	առ. գիտաշխ.	փ.գ.դ.	75000
14	Սամարչյան Ալեքսանդր Սեմոնի	կրտ.գիտաշխատող		75000
15	Միրումյան Կառլեն Արտավազդի	բաժնի վարիչ	փ.գ.դ.	55000
16	Միրումյան Ռիմա Արտավազդի	առ. գիտաշխ.	փ.գ.դ.	45000
17	Մինասյան Անուշ Արամայիսի	ավ. գիտաշխ.	փ.գ.թ.	40000
18	Սարվազյան Լիլիթ Սերյոժայի	ավ. գիտաշխ.	փ.գ.թ.	40000
19	Արզումանյան Սվետլանա Սուրենի	ավ. գիտաշխ.	փ.գ.թ.	40000
20	Օսիպյան Արմեն Վազգենի	լաբորանտ		38000
21	Պողոսյան Գևորգ Արամի	բաժնի վարիչ	ս.գ.դ.	55000
22	Առաքելյան Իռա Արծրունու	ավ. գիտաշխ.	տ.գ.թ.	73000
23	Օսիպով Վլադիմիր Գրիգորի	ավ. գիտաշխ.	փ.գ.թ.	73000
24	Ստեփանյան Վահագն Հովհաննեսի	ավ. գիտաշխ.	բ.գ.թ.	73000
25	Աղայան Նարինե Ալբերտի	լաբորանտ		75000
26	Վարդանյան Ասյա Ռազմիկի	լաբորանտ		75000
27	Կրտյան Նելլի Սերյոժայի	ծրագրավորող		40000
28	Ստեփանյան Հովհաննես Միքայելի	բաժնի վարիչ	[illegible]	

30	թափուր	ավ. գիտաշխ.	ի.գ.թ.	73000
31	թափուր	ավ. գիտաշխ.	ի.գ.թ.	73000
32	Պողոսյան Վիկտորիա Գևորգի	լաբորանտ		50000
33	Ուզունյան Կարինե Մակիչի	լաբորանտ		75000
34	Շիրինյան Լևոն Ղազարի	բաժնի վարիչ	բ.գ.դ.	55000
35	Մանասյան Ալեքսանդր Սարգսի	առ. գիտաշխ.	փ.գ.դ.	40000
36	Պողոսյան Ռիմա Մինասի	ավ. գիտաշխ.	ի.գ.թ.	73000
37	Օրդուխանյան Էմիլ Հրաչյայի	ավ.գիտաշխ.	բ.գ.թ.	40000
38	Սուքիասյան Հայկ Հրահատի	ավ. գիտաշխ.	բ.գ.թ.	40000
39	Սիմոնյան Գուրգեն Էդմոնի	ավ.գիտաշխ.	բ.գ.թ.	41000
40	Կարապետյան Մարինա Մերուժանի	լաբորանտ		75000
41	Հարությունյան Մանուկ Արսենի	բաժնի վարիչ	փ.գ.դ.	85000
42	Կյուրեղյան Էդիկ Անդրանիկի	ավ. գիտաշխ.	փ.գ.թ.	40000
43	թափուր	ավ. գիտաշխ.	փ.գ.թ.	73000
44	Նաղդյան Գեոքրգի Միխայիլի	լաբորանտ		75000
45	Հակոբջանյան Կարինե Արծրունու	գրադարանավար		75000
46	Ապիկյան Գայանե Մինասի	լաբորանտ		75000
47	Պետրոսյան Լուսինե Սամվելի	գործավար		80000
48	Սաֆարյան Մերի Նաիրիի	քարտուղար		75000
49	Մաքսուդյան Հակոբ Հարությունի	գիշերային պահակ		94000
50	Տեր-Մինասյան Հովհաննես Մկրտչի	գիշերային պահակ		94000
51	Խաչատրյան Դոլիկ Թովմասի	ցերեկային պահակ		75000
52	Դանիելյան Արամ Հենրիկի	ցերեկային պահակ		75000
53	Մաթևոսյան Սիրանուշ Վաչիկի	հավաքարար		75000
54	թափուր	հավաքարար		75000
55	թափուր	հավաքարար		75000
				3928000

Տնօրենի պաշտոնակատար՝ _____ Գ.Ա. Պողոսյան

(ստորագրություն) (Ա.Ա.Հ)

Կազմակերպության
անձնակազմի
կառավարման բաժնի պետ՝ _____ Ս.Մ.Աթաբեկովա

(ստորագրություն) (Ա.Ա.Հ)